է Սերբ Եկեղեցու շատ թեմեր ինչպես նախկին Հարավսլավիայի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նորին Սրբությունն այցելել է Ավստրալիայի, Ամերիկայի, Կանադայի եւ Արեւմտյան Եվրոպայի իր հոգեւոր հոտին: Սրբազնագույն Պավել Պատրիարքը մի քանի գրքերի հեղինակ է: Ավելի քան 20 տարի «Սերբ Ուղղափառ Եկեղեցու Բանբեր» պարբերականում տպագրվում էին ծիսագիտության վերաբերյալ նրա ուսումնասիրությունները: Երկար ժամանակ նա եղել է Նոր Կտակարանի թարգմանության Սինոդական խորհրդի ղեկավարը:

2007 թվականի նոյեմբերի 13-ից Պավել Պատրիարքը ստացիոնար բուժվում էր Բելգրադի Ռազմա-բժշկական ակադեմիայի հոսպիտալում:

2008 թվականի մայիսի 15-ին Սերբ Ուղղափառ Եկեղեցու Եպիսկոպոսական Ժողովը ժամանակավորապես առաջնորդի գործառույթները հանձնեց Սրբազան Սինոդին՝ ի դեմս նրա նախագահ Ցետինիայի արքեպիսկոպոս, Զեռնոգորսկո-Պրիմորիայի մետրոպոլիտ Ամփիլոքոսի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական ուղերձ է հղել Սինոդի նախագահ Մետրոպոլիտ Ամփիլոքոսին, Սերբ Ուղղափառ եկեղեցու հոգեւորականաց դասին, Սերբիայի Հանրապետության կառավարությանը եւ համայն սերբ ուղղափառ ժողովրդին: Ուղերձի տեքստն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորեւ:

ՍԵՐԲ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՑԵՏԻՆԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՌՆՈԳՈՐՍԿՈ-ՊՐԻՄՈՐԻԱՅԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՍԵՐԲ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ԱՄՖԻԼԻՔՍԻՆ

Գերաշնո՛րհ Սրբազան հայր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սրտի կսկիծով տեղեկացանք, որ 2009 թ. նոյեմբեր 15-ին ի Տեր հանգյավ մեր սիրեցյալ եղբայր՝ Սերբ Ուղղափառ Եկեղեցու պետ՝ Նորին Սրբություն Պավլե Պատրիարքը:

Մեր ցավակցություններն ենք բերում Սերբ Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականաց դասին եւ ողջ հավատացյալ ժողովրդին, Սերբիայի Հանրապետության իշխանություններին երանաշնորհ հայրապետի մահվան տխուր առիթով:

Երանաշնորհ Պավլե Պատրիարքն ապրեց ու գործեց Եկեղեցու եւ Սերբ ժողովրդի պատմության համար վճռորոշ մի ժանանակաշրջանում: Հակառակ անապրվածական տարբեր վարչակարգերի հալածանքներին ու փորձություններին՝ երանաշնորհ Հայրապետն անսասան կանգնեց իր հոտի կողքին՝ որպես հովիվ, եպիսկոպոս եւ Պատրիարք: Նա առաջնորդեց Սերբ Ուղղափառ Եկեղեցին՝ որպես քաջ հովիվ եւ սիրված առաջնորդ:

Նրա սխրալից կյանքի օրինակը եւ թողած մեծ ավանդը՝ Բալկանյան երկրներում խաղաղության հաստատման, կրոնների երկխոսության եւ սերբ ժողովրդի ազգային իրավունքների պաշտպանության գործում՝ ներշնչման աղբյուր են սերունդների համար եւ իր մասին են խոսելու գերեզմանից այն կողմ:

Աղթում ենք, որ Երկնավոր Տերը Մեր Հիսուս Քրիստոս իր երանավետ օթեւաններում հանգչեցնի Պավլե հայրապետի հոգին եւ հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունը Սերբ Ուղղափառ Եկեղեցու, Սերբիայի իշխանությունների եւ նրա հավատավոր զավակների համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի

Վշտակից սրտով

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ